սական էժանագին հացի ներմուծումը և ուշանում էր հացահատիկային մշակույթին կից հողամշակության այլ, ավելի արդյունավետ ճյուղերի զարգացումն. ավելի համառորեն պահպանվում էին թե՛ դաշտամշակության և թե՛ անասնապահության ավանդական ձևերը։ Տնայնագործությունը շատ դանդաղ էր տեղի տալիս գործարանային ապրանքների տարածմանը։ Ներմուծված ապրանքների գները ծանրաբեռնվում էին ավելի բարձր վերադիր տոկոսով և առևտրամիջնորդական կապիտալն ավելի սուր կերպով էր ցուցաբերում իր վաշխառուական էությունը։ Նույնիսկ XX դ. սկզբին պղնձի հանքավայրերի աշխուժացած շահագործումը չէր խթանում ճանապարհների բարելավումը և չնչին չափով էր ձևափոխում տեղական տնտեսական զբաղմունքների բնույթը, մանավանդ, որ հանքատերերն աշխատում էին իրենց անհրաժեշտ բանվորական ուժը լրացնել առավելապես Պարսկաստանից ներգրավված էժան աշխատող տարրերով։ Զանգեզուրը մինչև սովետական կարգերը մնաց գերազանցորեն հետամնաց ագրարային լեռնաշխարհ, որտեղ հացահատիկային կուլտուրան նախնական անասնապահության հետ սերտորեն շաղկապված՝ բացառապես գերիշխող էր, համառ պահպանվում էին տնայնագործական աշխատանքի հին ձևերը։

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Զանգեզուրցին ցանում էր առաջին հերթին ցորեն և գարի, ապա նաև հաճար, ձեթ ստանալու համար՝ կտավհատ (գանգրավուշ) և հրլածուկ, կորեկ և ոսպ։ Գորիսի շրջանը հայտնի էր իր կարմիր ցորենով՝ Տեղ, Խնձորեսկ, Կոռնիձոր։ Նախադասում էին աշնանացանը։

Վարում էին գլխավորապես ալաթավ՝ արորով։ Գութանը ավելի հայտնի էր Սիսիանում, մասամբ էլ Գորիսի շրջանում, առավելապես Եռաբլուրի՝ Ուչթափալարի սարահարթում։ Գործ էր ածվում[2] երկու տեսակի գութան. մեկը՝ անիվավոր— ակնէ գութան, մյուսը՝ անանիվ— կոի գութան։ Երկու ձևերն էլ չէին տարբերվում հարևան Նախիջևանի գավառում պատահող օրինակներից։ Այդ ծանր փայտե գութանները, որոնք պահանջում էին 7-ից մինչև 10 զույգ լծկան, այժմ ամեն տեղ վերացած են։ Գործարանային գութանը վերջնականապես հաղթել է։ Նույնը չի կարելի ասել ալաթի մասին, որը դեռ դիմանում է գործարանային արորի մրցմանը։ Նա ունի ավելի տեղական առանձնահատկություններ։

Վէսկի[3], ալաթ։ Զանգեզուրում հայտնի չէ հարևան Մեղրու հայկական գörծէն անունը։ Վէսկու էական մասն է կազմում տաշած հորիզոնական կոճղը՝ առատամը, որի առջևի սրած ծայրին նստեցրած է խոփը։ Խոփի սուր ծայրը կոչվում է խոփի ծէր, հակառակ բութ և լայն կողմը՝ խոփի քնուփ, իսկ կողերը՝ ճանէր։ Առատամի ետևի բութ և ավելի հաստ մասին ուղղահայաց ամրացված է մաճը իր եղջյուրանման ծռված թէվքէրավ, որոնցից մաճկալը

---

[2] Հմմտ. Зелинский С. П., նշված աշխ., էջ 79։

[3] Ողջիի (Օխշիի) հովտում ասում են սարվազ, մի անուն, որը հայտնի չէ հարևան Արծվանիկի շրջակայքում։ Նույն տեղում, էջ 80։ Գորիսում չեն գործածում ալաթ բառը, այլ վէսկի՝ թե՛ բուն գործիքի և թե՛ արդեն լծված ամբողջ կազմի համար։ Alat, alet—արաբ. ակունք ունի։